

ԱՅՈՒՐԱՍՍԱԶԴԱՆ, ԶՐԱԴԱՇՏԸ ԵՎ ԱՔԵՄԵՆՅԱՆ  
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աքեմենյան շրջանի մասին գոյություն ունեն երեք գրական աղբյուրներ, որոնք իրարից տարբերվում են վստահությամբ, ծավալով ու խոսքի տեսակով:

1. Աքեմենյան թագավորների քարե արձանագրությունները.

2. հունահռոմեական արձանագրություններն ու հաղորդագրությունները,

3. անհամար կավե սեպագրերը, որոնք հիմնականում գրվել են էլամերենով և Պերսեպոլիսում նրա դիվանապետական հարաբերությունների մասին են: 1933-1934 թթ. Պերսեպոլիսում կատարած պեղումների արդյունքում Աքեմենյան թագավորության մայրաքաղաքի բերդամրոցի պատերի տակ հայտնաբերվեցին շուրջ 30 հազար կավե արձանագրություններ՝ գրված հիմնականում էլամերեն սեպագիր գրերով: Դրանք մեզ են հասել աքեմենյան Դարեհ Գ թագավորի /Ք.ա. 522-484/ ժամանակներից և համարվում են Դարեհ արքայի թագավորության 13-ից 20-րդ տարիների, այսինքն՝ Ք.ա. 509-494 թթ արձանագրություններ: Սրանք թագավորական դիվանապետական արխիվների մի փոքր մասն են կազմում: Աքեմենյան գահակալության մայրաքաղաք Պերսեպոլիսում այս արձանագրությունները հում ձևով էին պահպանվում, սակայն երբ Ք.ա. 330 թվականին Ալեքսանդր Մակեդոնացին զրավեց Պերսեպոլիսը, նա այրեց Աքեմենյան գրեթե բոլոր պալատները: Թեպետ դրա հետևանքով արձանագրությունների մեծ մասը ոչնչացվեց, սակայն շուրջ 6000 կավե արձանագրություն թրծվեց կրակում և ավելի ամուր դարձավ: Այսօր դրանցից 2000-ը թարգմանված և հրատարակված է»:<sup>1</sup>

Այդ տեղեկությունների մեծ մասը պատմում է աքեմենյանների կրոնական հավատալիքների, ծեսերի ու արարքների մասին: Հին պարսկերենով գրված մի շարք արձանագրություններ կրկնօրինակներ ունեն հին բաբելոնական և էլամական չեզուներով, ինչը հնարավորություն տվեց բազմաթիվ անհասկանալի խոսքեր վերծանելու: Հին պարսկերեն արձանագրությունները գրվել են հատուկ պարսկերեն սեպագրերով, որոնց նմուշներն աքեմենյան թագավորների արձանագրություններում կիրառվել են 300 տարի՝ սկսած Աքեմենի թոռ Արյաման թագավորի ժամանակներից մինչև Դարեհ Գ-ի ժամանակաշրջանը:

<sup>1</sup> Սաբեթ Փուլյան, «Բարիների խոսքեր, որդիների արարքներ, ապագա սերունդների մտածելակերպ», 2003, էջ 13

Այսպիսով, դրանք գոյատևել են շուրջ 600 տարի և ոչնչացել Ք.ա. 330 թվականին՝ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից կայսրության զավթման ժամանակաշրջանում: «Արծաթագած կամ ոսկեգած կավի, ինչպես նաև քարերի վրա պարսկերեն սեպագիր արձանագրություններ են հայտնաբերվել ներկայիս Թուրքիայի, Իրանի, Եգիպտոսի տարածքների լեռնային գոտիներում, քարե ամանների վրա, որտեղ բազմիցս հիշատակվել են աքեմենյան թագավորների՝ Արիյամանի, Արշամի, Մեծն Կյուրոսի, Մեծն Դարեհի, Քսերքսեսի, Արտաշիր Առաջինի, Դարեհ Երկրորդի, Արտաշիր Երկրորդի և Դարեհ Երրորդի անունները: Այդ արձանագրություններից շատերն այսօր պահպանվում են Իրանի, Լոնդոնի, Փարիզի, Բեռլինի և Պետերբուրգի պետական կամ ազգային թանգարաններում: Դրանք բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում պատմական դեպքերի, պատերազմների, թագավորական պալատների կառուցման ու այն երկրների մասին, որտեղ թագավորություններ են կազմվել: Դրանցում խոսվում է նաև աքեմենյանների կրոնական հավատալիքների մասին»:<sup>2</sup>

«Աքեմենյան քարե արձանագրությունները շատ հստակ փաստեր են աքեմենյան թագավորների վարքի մասին: Պերսեպոլիսի քարե արձանագրությունների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դրանք սկսվում են ամենակալ Ահուրամազդայի անունով և ավարտվում նրա վեհության փառաբանմամբ, որպեսզի նա պահպանի արքաներին: Այս գրություններն ամենամեծ ապացույցն են այն բանի, որ աքեմենյան իրանական ժողովուրդը եղել է աստվածապաշտ և հերքում է այն վարկածը, թե իսլամից առաջ իրանացիները եղել են անհավատ»:<sup>3</sup> «Այն բառը, որ իր <<Գաթհա>>-ներում Զրադաշտ Արայնակ աստծուն է ուղղել, եղել է Ահուրեհ Մազդան: Զրադաշտական կրոնի սրբազան գրքում՝ Ավեստայում փառաբանման և աղոթքի սկզբում աչքի է ընկնում հետևյալ նախադասությունը. «Խըշնաուսրա Ահուրահե Մազդա», այսինքն՝ «Թող տեր աստված մեզանից գոհ լինի»: Զնագույն ժամանակներից մինչև մեր օրերը Ահուրամազդա անունը հանդես է եկել տարբեր ձևերով՝ Ուրմազդ /հայերենում՝ Ուրմիզդ/, Զորմազդ, Զորմոզդ, Զորմոզ:

Այսօր էլ զրադաշտականները հաճախ օգտագործում են Զորմազի տարբերակը «աստված» բառի ժշանակությամբ: Ավեստայի ամենահին բաժինը համարվող Զրադաշտի <<Գաթհա>>-ներում այս բառը երբեք Ահուրամազդայի իմաստով չի կիրառվել: Որոշ դեպքերում Ահուրա և Մազդա բառերն իրարից առանձին են կիրառվել: Օրինակ՝ Յասնայի 28-րդ կետում օգտագործվել է

<sup>2</sup> Շարի Դելֆ Նարման, «Աքեմենյան թագավորների իրանաները», 3-րդ տպագրություն, «Փագինե» հրատարակչություն, 2003, էջ 21

<sup>3</sup> Խոջե Աբդուլահի Սոհամադ, Զասան, «Թախթե-Ջամշիդը քարե սաղաֆ», 2002, էջ 2

միայն Մազդա անունը, 8-րդ կետում՝ Սիուրա անունը, իսկ մի քանի բառ հետո՝ նաև Մազդա անունը: 6-րդ կետում Յասնան նախ կիրառել է առանձին Մազդա անունը, ապա մի քանի նախադասություն հետո՝ Սիուրա անունը, իսկ վերջում էլ Սիուրա Մազդա անունները կիրառել է միասին: Զրադաշտի բոլոր <<գաթ-հա>>-ներում, որտեղ Մազդա և Սիուրա բառերը միասին են կիրառվել, անունը ստացել է Մազդաահուրա տեսքը: Օրինակ, 11-րդ կետի 28-րդ Յասնայում Զրադաշտն ասում է. «Ով դու, Մազդաահուրա, քո գիտությունից ինձ սովորեցրու և քո լեզվից ինձ տեղեկացրու, թե վերջին օրերն ինչպես կլինեն»:<sup>4</sup> Սակայն Ավեստայի մյուս մասերում, որոնք գրեթե բոլոր ավեստագետների կարծիքով ամենավերջին <<գաթհա>>-ներն են, անունը գրվել է Սիուրամազդա: Սա նշանակում է, որ անվան այս ձևը ավելի նոր ձև է և գրվել է Զրադաշտից հետո: Պետք է ասել, որ այսօրվա 2012 քրիստոնեական տարին հավասար է զրադաշտականության 3750 տարվան, և Զրադաշտի ապրած ժամանակաշրջանից մինչև Աթենենյան դինաստիան անցել է շուրջ 12 դար: Գրեթե բոլոր զրադաշտագետները, հաշվի առնելով իրենց հնէաբանական գտածոները, հատկապես հունական ու հռոմեական արձանագրությունները, Մազդա Սիուրան կամ Սիուրամազդան համարում են այն անունը, որ ստեղծել է Զրադաշտը՝ որպես աստծու անուն, և նրանից առաջ ոչ ոք այս անունը չի օգտագործել: Դույն ամենամեծ ու առաջին փիլիսոփա Պրոդոմնոսը /Ք.ա.347-249թթ./ հիշատակում է Սիուրամազդայի և նրա առաջյալ Զրադաշտի անունները: Ալեքսանդր Մակեդոնացու պատմաբաններն իրանացիների աստծուն կոչել են Ուրմագեշ կամ Դուրմագեշ: Դույն փիլիսոփա Պորֆիրիոսը /մահացել է Ք.ա. 304թ./ և Պյութագորասը /Ք.ա. 6-րդ դար/ նրան համարել են Զրադաշտի աշակերտներից: Նա այսպես է ասում. «Միայն ճշմարտության միջոցով է մարդը նմանվում աստծուն, քանի որ, ինչպես Պյութագորասն էր մոգերից սովորել այն աստված, որին կոչում են Ուրմագեշ, մարմին է լույսի պես և հոգի է ճշմարտության տեսքով»: Կամ. «Նրա մարմինը լուսավորության նման է, և գիտությունը ճշմարտության նման է»:<sup>5</sup> Սիուրամազդա բառը բաղկացած է երկու մասից. առաջին մասը՝ Սիուրան, նշանակում է կյանք ստեղծող կամ արարիչ, իսկ երկրորդ մասը՝ Մազդան, իր հերթին նույնպես բաղկացած է երկու մասից՝ Մազ-դա, որից «Մազ» նշանակում է *մեծ*, «դա»՝ *գիտություն*: Այսինքն՝ Մազդա նշանակում է Մեծ իմաստուն, իսկ Սիուրամազդա՝ Մեծ իմաստուն արարիչ:

<sup>4</sup> Օշիդրի, Զահանգիր, «Ջարդյասնայի գիտություննա գիր», Մարքազ հրատարակչություն, 2-րդ տպագրություն, 1999, էջ 20

<sup>5</sup> Օշիդրի, Զահանգիր, «Ջարդյասնայի գիտություննա գիր», Մարքազ հրատարակչություն, 2-րդ տպագրություն, 1999, էջ 25

Իրանի զրադաշտականների լեզվով *Մազ* նշանակում է *մեծ*, այն հնչում է Մաս, իսկ հայերենում մեծ ձևով է կիրառվում: Այդ նույն <<զաթիա>>-ներում Ջրադաշտի անունը գրվել է «Ջարթոշտրա» (Zartushtira) ձևով և բաղկացած է եղել 2 մասից. առաջին մասը՝ «Ջարաթս», նշանակում է ոսկեգույն, փայլուն: Հետագայում այս բառը ձևափոխվել է zarth-ի, որն այսօր արտասանվում է «զարդ» և կիրառվում է դեղին գույնի իմաստով: Սակայն ի սկզբանե այն կիրառվել է որպես «ոսկի»՝ իր դեղին գույնի համար:

Երկրորդ մասը Ջրադաշտի անուն Ուշրան է, որը պարսկերենում օգտագործվել է Ուստրա, Ուստեր, Էստարե կամ Սեթարե, իսկ անգլերենում՝ star ձևով: Բազմաթիվ անգամներ Սիուրամազդա անունը կիրառվել է աքեմենյան արձանագրություններում, մինչդեռ դրանցում Ջրադաշտի անունը ոչ մի անգամ չի հիշատակվել: Այդ է պատճառը, որ ոմանք պնդում են, թե աքեմենյանները զրադաշտական չեն եղել: Աքեմենյան գրություններում Ջրադաշտի անվան բացակայությունը բացատրվում է հետևյալ պատճառներով.

1. Մազդա, Սիուրա, Մազդա Սիուրա կամ էլ Սիուրամազդա անունները առաջին անգամ իր երգերում ու փառաբանություններում օգտագործել է Ջրադաշտը: Այս անունը ստեղծել է Ջրադաշտը, և նրանից առաջ ոչ ոք այն չի օգտագործել: Բարտուկումեն գրում է. «Ջրադաշտի հիմնական նորարարությունը նրանում է, որ մինչ այդ գոյություն ունեցող բազմաթիվ աստվածներին նա փոխարինեց մեկ «Գիտուն աստծով» կամ «Անուրոամազդայով»»: Ռուդոլֆն այն կարծիքն է հայտնում, որ Ջրադաշտի աստվածը պաշտվել է բոլոր արիացիների կողմից, սակայն առ այսօր ոչ ոք այդ պնդումը չի ապացուցել, և կարելի է ընդունել, որ այս աստվածը պատկանում է <<զաթիա>>-ներին և Ջրադաշտի միակ աստվածն է: Հիմնվելով Նավադիայի աստվածների մասին ունեցած գիտելիքների վրա՝ հնդիկ հետազոտող Դուշ Գիմանն ասում է. «Եթե Սիուրամազդային Ջրադաշտից առաջ էին պաշտում, ապա պետք է իրենց աղոթքներում արիական աստվածների պես որևէ «Վեդայի» գովերգին այնպես, ինչպես Միտրային, Սնահիտային, Տիշտարին և մյուս աստվածներին: Մեկ ճշարտություն պարզ է. նմանատիպ աղոթքներում գովերգման կամ պաշտամունքի խոսք գոյություն չունի, և սա պետք է դնել այն բանի ապացուցման հիմքում, որ աստված «Մազդա Սիուրայի», «Սիուրա Մազդայի», «Սիուրայի» կամ «Մազդայի» անունով արիական պաշտամունքներում գոյություն չի ունեցել»<sup>6</sup>

<sup>6</sup> Ջալալեդին Աշտիանի, «Ջրադաշտ Մազդա Յասնա և պետություն», 8-րդ տպագրություն, 2002, էջ 131

Աթեննյան արձանագրություններում արտացոլված հավատալիքներում, հատկապես Աթեննյան Դարեհի արձանագրություններում Ջրաղաշտի պատգամում բոլորից շատ իրանացիներից մնացած վկայությունների ազդեցություններն ենք տեսնում: Սա համարվում է մեծն Դարեհի թագավորի կապը Ջրաղաշտի իսկական կամ հիմնավոր պատգամի հետ:<sup>7</sup>

2. Ջրաղաշտի անվան բացակայությունը բացատրելու համար պետք է քննարկենք աթեննյան արձանագրություններում Ջրաղաշտի տեղն ու դերը: Այսպես, Ջրաղաշտը մեծ հարգանք է վայելում՝ որպես զրադաշտականության կրոնի առաքյալ կամ պատգամաբեր, սակայն մյուս մարդկանց նման նա հասարակ մահկանացու է, որը հետևելով մտածողությանը, բարի խոսքին ու արարքին՝ ճանաչեց միակ հզոր աստծուն: Եվ թեպետ նրան տվել էին «Աշու»՝ մաքուր, ճշմարիտ, բարի անունը, բայց զաթիաներում ինքն իրեն կոչում է «Սուշիանթ»՝ օգուտ հասցնող: Այնուամենայնիվ, զրադաշտականության ուսմունքում նշվում է, որ նման շնորհով օժտված են բոլոր մարդիկ, բոլորն էլ, հետևելով իրենց մտքին, բարի խոսքին ու բարի արարքին, ծեռք բերելով գիտություն և ինքնամաքրում, պետք է հասնեն բարեպաշտության ու համեստության: Այլ մարդկանց, կենդանիների, բնության նկատմամբ բարիք գործելով՝ մարդը կարող է հասնել «Աշուի»՝ սրբության և ճշմարտության, և համահունչ լինել տիեզերական համակարգին ու Սիուրամազդայի ցանկությանը՝ հասնելով աշխարհի արարչության շենությանն ու օգտավետությանը՝ Սուշիանթի: Հետևաբար այս երկու գերագույն աստիճանները միայն Ջրաղաշտի մենաշնորհը չեն, այլ յուրաքանչյուրը կարող է հասնել դրանց: Բացի այդ՝ Ջրաղաշտը չի կարող ներել կամ թողություն տալ մարդկանց մեղքերին, եթե իր հետնորդները որևէ դեր չունենան Ջրաղաշտի արտակարգ գործերի համար, իսկ Ջրաղաշտի դերը կայանում է նրանց դեպի ճշմարտությունն առաջնորդելը և ուղղություն տալը: Ինքը՝ Ջրաղաշտը իր կրոնը զրադաշտականություն չի անվանում, իսկ իր հետևորդներին կոչում է աշուվաններ՝ ճշմարտության հետևորդներ: Ջրաղաշտի մահից հարյուրավոր տարիներ հետո միայն այս կրոնը կոչվեց նրա անունով:

Ջրաղաշտականության կրոնում ինքնապաշտություն կամ սրբաշինություն գոյություն չունի: Այն ընդունում է Սիարումազային՝ որպես բոլոր ուժերի և ունակությունների տեր ու տիրակալ՝ նրան կոչելով «Հարվասսպ Թավան», որ

<sup>7</sup> Ջալալեդին Աշտիանի, «Ջրաղաշտ Մազդա Յասնա և պետություն», 8-րդ տպագրություն, 2002, էջ 115-116

նշանակում է «Ամենակարող»: Հետևաբար արարչության գոյության և բոլոր բարիքների ու բարությունների ակունքը Սևուրամագդան է:

Իսկական զրադաշտական Սեօն Դարեհը՝ իր ողջ վեհությամբ ու հպարտությամբ հանդերձ, նշում է, որ իրեն հովանավորել է Սևուրզմագդան: Դարեհը երբեք չձգտեց ներկայացնել իրեն՝ որպես երկինքների աստծու ներկայացուցիչ կամ որպես սուրբ: Եվ քանի որ նրա խոսքերը նման են Ջրադաշտի խոսքերին, դա ապացուցում է, որ նա լավ ճանաչել է Ջրադաշտին, սակայն քանի դեռ Իրանում չի եղել անձնական սրբացումը, ուստի նրա արձանագրություններում որևէ անուն չի նկատվում, քանի որ այն դիրքն ու սրբացումը, որը Ջրադաշտը ձեռք բերեց Սասանյանների ժամանակ, Աքեմենյանների շրջանում գոյություն չուներ, և այդ ժամանակ բոլոր դեպքերում սրբացվում ու մեծարվում էր միայն Սևուրամագդան:<sup>8</sup>

3. Աքեմենյան ճարտարապետության մեջ զրադաշտական խորհուրդների, հատկապես մինչև այսօր տարածված և կիրառություն ունեցող խորհուրդների կիրառության փաստը ապացուցում է, որ աքեմենյանները հավատացել են Սևուրամագդային՝ զրադաշտականության աստծուն՝ սկզբից մինչև այսօր:

4. Աշեն Վոհրդի զրադաշտական պաշտամունքի հայտնագործությունը սողդի լեզվով հին պարսից լեզվին մոտիկ առոգանությամբ, ինչպես նաև այն գրությունը, որտեղ գրված է Սևուրամագդային Ջրադաշտի այցելության ու Սևուրամագդայի հանդեպ Ջրադաշտի տածած հարգանքի մասին, ապացուցում են աքեմենյան շրջանի կրոնական թեմաների հավվածությունը դեպի զրադաշտականությունը:<sup>9</sup>

5. Ջսերքսեսի և Արտաշիր Բ-ի ժամանակաշրջանում զրադաշտականության մեջ կրոնական որոշ փոփոխությունների առաջացումը ցույց է տալիս, որ սկզբնական շրջանի աքեմենյան թագավորները կատարելապես ծանոթ են եղել Ջրադաշտի պատգամին, սակայն իրենց արձանագրություններում, բացի տիրոջ՝ Սևուրամագդայի անունից, արիական ոչ մի աստծու անուն չեն հիշատակել, և դա արդեն ապացուցում է վերոհիշյալ թագավորների՝ իսկական զրադաշտ լինելը, քանի որ իսկական զրադաշտը ճանաչում է միայն մեկ աստծու՝ Սևուրամագդային: Աքեմենյան արձանագրությունների տեքստերում փոփոխություններ առաջացնելու փաստը ցույց տալու համար կարելի է բերել երկու օրինակ. «Ջսերքսես թագավորի օրոք որոշ քայլեր կատարվեցին դեպի

<sup>8</sup> Զավիանի, «Սնահիտա», Ամորդատի շաբաթաթերթ, հ. 282, օգոստոս, 2012, էջ 6

<sup>9</sup> Զավիանի, «Սնահիտա», Ամորդատի շաբաթաթերթ, հ. 282, օգոստոս, 2012, էջ 6

զրադաշտականության ազգայնացումը, և դա եղավ այսպես կոչված պայքար դեմի հետ, որոնց մտածելակերպը հերքել էր Զրադաշտը»:<sup>10</sup>

Իր քարե արձանագրություններում Քսերքսեսն այսպես է խոսում այդ մասին. «Կային այնպիսի վայրեր, որտեղ պաշտում էին դևերին, սակայն Սիարունազդայի կամքով ես ավերեցի այդ վայրերը և հրամայեցի այլևս չպաշտել այդ դևերին»:

«Աբեմենյան Արտաշիր Բ թագավորի օրոք՝ Աբեմենյան դինաստիայի երկրորդ կեսում, կրոնում որոշ փոփոխություններ տեղի ունեցան: Սիուրամազդա հզոր ու միակ տիրոջից ներքև առաջացան արիական երկու հին «Սիթրա» և «Անահիտա» աստվածների պաշտամունքատեղիներ, որոնց մասին առաջին անգամ իր քարե արձանագրություններում հիշատակում է Արտաշիր Բ թագավորը»:<sup>11</sup>

Սինչ օրս հայտաբերված հին պարսկական ամենահին արձանագրություններից մեկը Արիարամնայի /Ք.ա. 640-590/՝ Մեծն Դարեհ Աբեմենյանի նախահոր արձանագրությունն է, որը հայտնաբերվել է 1920 թվականին Իրանի Համեդան քաղաքում:<sup>12</sup> 11 տողից բաղկացած այս գրության մեջ արքան այսպես է գրում. «Արիարամանը՝ մեծ արքան, արքայից արքան, որ արքան է պարսից և որդին է Չիշ-Փիշ թագավորի, թողը Աբեմենի, ասում է. «Իմ այս պարսից երկիրն ունի լավ ձիեր և լավ մարդիկ /ժողովուրդ/։ Նրանց ինձ նվիրեց մեծն աստված Սիուրամազդան: Նրա կամոք ես այս երկրում թագավոր եմ»»: Հետո ասում է. «Թող Սիուրամազդան ինձ արժանավայել օգնական լինի»: Մեկ այլ գրություն էլ պահպանվել է Արիարամանի որդի Արշամից: Այն բաղկացած է 14 տողից: «Արշամը Ք.ա. 615 թվականին նստեց իր հոր գահին ամենայն հավանականությամբ մինչև մեծն Կյուրոս թագավորի գահակալության ժամանակաշրջանը, որը նույնպես Աբեմենյան մեծ տոհմից էր, Արշամն թագավորն էր պարսից տոհմի: Սակայն մեծն Կյուրոսի գահ բարձրանալուն պես Վիշտասպը՝ որդին Արշամ արքայի, այլևս ի գորու չեղավ նստել հոր գահին և թագավոր կարգվել: Սակայն երբ Աբեմենյան կայսրության թագավոր դարձավ Մեծն Դարեհը, և սպանվեցին Մեծն Կյուրոսի որդիներ Կամբիսին ու Բորդյան, Աբեմենյան թագավորությունը կրկին փոխանցվեց Արշամ թագավորի ընտանի-

<sup>10</sup> Քավիանի, «Անահիտա», Ամորյատ շաբաթաթերթ, հ. 282, օգոստոս, 2012, էջ 6

<sup>11</sup> Քավիանի, «Անահիտա», Ամորյատ շաբաթաթերթ, հ. 282, օգոստոս, 2012, էջ 6

<sup>12</sup> Շարպ Դոլֆ Նարման, «Աբեմենյան թագավորների հրամանները», 3-րդ տպագրություն, Փազինե մշակութային հրատարակչական կազմակերպություն, 2009, էջ 21

քին: Երբ Զ.ա. 521 թվականին Ղարեհը դարձավ Աքեմենյան գահակալ, նրա պապ Արշամը դեռ ողջ էր:<sup>13</sup>

Այս գրության մեջ Արշամ արքան ասում է.«Արշամը, մեծն արքան, արքայից արքան, Պարսից երկրի արքան, Աքեմենյան Արիարաման արքայի որդին, ասում է. «Ահարունագղան» մեծ աստվածը, ամենամեծ աստվածը բոլոր աստվածների, ինձ թագավոր դարձրեց: Նա ինձ նվիրեց պարսից երկիրը, որն ունի լավ մարդիկ ու լավ ձիեր: Ահարունագղայի կամքով ես ունեմ այդ երկիրը: Թող Ահարունագղան ինձ, իմ գերդաստանին ու իմ երկրին պահապան լինի»:

Աքեմենյան շրջանի արձանագրություններից ամենակարևորը Մեծն Ղարեհի արձանագրությունն է, որը գրված է Քերմանշահի Բիսոթուն լեռան վրա: Այն քանդակված է մոտավորապես 60 մետր բարձրություն ունեցող մի հսկա քառակուսի հարթ ու ողորկ ժայռի վրա, որն ունի 5.5 մետր երկարություն և 3 մետր լայնություն: Այս արձանագրությունը գրվել է երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն:<sup>14</sup>

Պարսից հին տեքստը գրվել է 414 տողով, 5 սյունակներում, Մեծն Ղարեհ արքայի քանդակի տակ, և նրանում ներկայացված է 9 ապստամբների պատկերը, որոնց հաղթել է Ղարեհը: Այս գրության մեջ արժարժված են պատմական, լեզվական և կրոնական բազմաթիվ կարևոր տեղեկություններ և խնդիրներ: Այդ պատճառով այն համարվում է Աքեմենյան արձանագրություններից ամենակարևորը: Այս նույն գրությունը կշամական լեզվով բաղկացած է 593 տողից և ութ սյունակներից, իսկ բաբելոնականը՝ 112 տողից: Այս արձանագրության մեջ Մեծն Ղարեհն իրեն հռչակել է Աքեմենյան իմներդդ թագավոր: Այս արձանագրության մեջ երևում է, թե ինչպես է Մեծն Ղարեհը բարձրացրել իր աջ ձեռքը մինչև դեմքը, որով ցուցադրել է իր հարգանքը դեպի Ահուրամազդան:

Բիսոթունյան արձանագրության մեջ Ղարեհը գրեթե 50 անգամ հիշատակում է Ահուրամազդային՝ իր բոլոր հաջողություններով երախտապարտ լինելով նրան: Նա երբեք չի մոռանում Ահուրամազդային և նրան է համարում իր հաղթանակների միակ պատճառը: «Մարդու կողմից այսպիսի համեստությունն ու խոնարհությունը, այն էլ 2500 տարի առաջ, նման է հրաշքի: Թեպետ Մեծն Ղարեհը մի հզոր աշխարհակալ կայսրության թագավորն էր, բայց նա երբեք չի գոռոզացել և իր բիսոթունյան արձանագրության յուրաքանչյուր տողում հիշա-

<sup>13</sup> Շարպ Դոլֆ Նարման. «Աքեմենյան թագավորների հրամանները», 3-րդ տպագրություն. Փագինե մշակութային հրատարակչական կազմակերպություն, 2009, էջ 21

<sup>14</sup> Վարդադի Նեժադի Իրաջ, «Բիսոտունը մեկ ընդհանուր հայացքով», Ֆարահար ամսագիր, հ. 405, 2004, էջ 28

տակել է Ահուրամազդայի անունը»:<sup>15</sup> Այդ արձանագրության հինգերորդ կետում, օրինակ, այսպես է գրված. «Դարեհ թագավորն ասում է՝ Ահուրամազդայի կամոք ես թագավոր եմ. Ահուրամազդան թագավորությունն ինձ պարգևեց»: Իսկ վեցերորդ կետում հիշատակում է իրեն ենթակա երկրները. «Սիա սրանք են այն երկրները, որոնք ինձ դարձան. Ահարումազդայի կամոքով ես նրանց թագավորն եմ»:

8-րդ և 9-րդ կետերում նա հիշատակում է Ահարումազդային՝ որպես Ջրաղաշտի միակ աստծու: 8-րդ կետում նա ասում է. «Այն երկրներում, որոնք հավատարիմ էին նրան, լավ վարձատրեցի: Իսկ նրանց, ովքեր հավատարիմ չէին, դաժան պատժեցի: Ահարումազդայի կամոք սրանք են այն երկրները, որոնք իմ օրենքը հարգեցին. ինչպես ես ասացի, այդպես էլ արվեց»:

9-րդ կետում գրված է. «Ահուրամազդան այս թագավորությունն ինձ նվիրեց. նրա կամոք ես այս թագավորությունն ունեմ»: 13-րդ կետում Մծեն Դարեհը Գեոմատի՝ Կյուրոս Բ թագավորի որդուն սպանողի նկատմամբ տարած իր հաղթանակը վերագրում է Ահարումազդային: «Ոչ ոք չէր կարող Գեոմատ Սոգի մասին որևէ բան ասել, մինչև որ ես հասա: Դրանից հետո ես օգնություն խնդրեցի Ահուրամազդայից: Նա ինձ արժանի օգնությունը տվեց»: Անգամ ողջ Աքեմենյան տարածքներում ապստամբների նկատմամբ տարած իր հաղթանակներում Դարեհը տեսնում է Ահուրամազդայի օգնությունը՝ անընդհատ կրկնելով հետևյալ նախադասությունները՝ Ահարումազդան ինձ օգնեց, Ահուրամազդայի կամոք իմ բանակը լավ ջարդեց այդ անհնազանդ բանակին: Անգամ իր ամենաչնչին հաղթանակները Դարեհը տեսնում է Ահուրամազդայի օգնության մեջ: Օրինակ, 18-րդ կետում խոսելով Բաբելոնում բռնկված ապստամբության և Աքեմենյան բանակի՝ Տիգրիս գետն անցնելու մասին, ասում է. «Ահարումազդայի կամոք Տիգրիսն անցա», այսինքն՝ Աքեմենյան բանակի անցնելը Տիգրիս գետը նա հնարավոր է համարում միայն Ահարումազդայի օգնության շնորհիվ: Բեհսթունյան արձանագրության մեկ այլ կետում նա ասում է. «Ղու, որ այսուհետ արքա ես լինելու, հեռու պահիր քեզ ստից, ստախոսին դաժան պատիժ տուր: Ահարումազդային վկա եմ վերցնում, որ այն, ինչ ես կատարեցի մեկ տարում, սուտ չէ: Ահարումազդայի կամոք շատ այլ գործեր կատարվեցին, որոնք այս գրության մեջ չեն ներկայացվում այն պատճառով, որ եթե հանկարծ ինչ-որ մեկը կարդա այն, ինչ իմ միջոցով է կատարված, շատ կհամարի և կկարծի, թե այդ ամենը սուտ է»:

<sup>15</sup> Բավիանի, «Անախտ», Անորդատ շաբաթաթերթ, հ. 282, օգոստոս, 2012, էջ 6

Բեհսոթունի արծանագրություններում զրադաշտական հավատալիքների բարձր արտահայտություններում Դարեհն ասում է. «Ահարումագդան օգնեց ինձ այն պատճառով, որ ամհավատարիմ չեմ եղել նրան, ստախոս չեմ եղել, ոտնձգող չեմ եղել և ձեռքերս չեմ երկարացրել այլոց նկատմամբ: Ես ճշմարտությամբ առաջնորդվեցի և ոչ թե թուլությամբ, կամ էլ բռնի ուժով: Դու, որ այսուհետ բազավոր կլինես, մի ընկերացիդ ստախոսների կամ ոտնձգողների հետ, խստորեն պատժիր նրանց»: Այդ նույն արծանագրության մեջ իր մասին Դարեհն այսպես է ասում. «Ահարումագդայի կամոք այս գրությունն իմն է: Այն արիական լեզվով է, որը գրվել է և քարե գրությամբ, և կաշվի վրա: Բացի դրանից, ես իմ պատկերը չիմեցի, տոհմագիր կազմեցի: Ինձանից առաջվա գրությունն էլ կարդացվեց: Դրանց հետո ես այս գրությունը բոլոր երկրներ ուղարկեցի»: Այս արծանագրության վերջին կետում Դարեհն ասում է. «Ով Ահարումագդային պաշտի, թե մեռած, թե կենդանի, բոլոր բարիքները նրանը կլինեն»: Սա փաստում է, որ Դարեհը զրադաշտական է, քանի որ բարիքները նույնիսկ մահացածներին է ուղղում: Զրադաշտական օրենքը հավատում է հոգուն և հարության օրվան, մարդու լավ ու վատ արարքների հատուցմանը, որ Ահարումագդայի կողմից է լինելու: Սրանք համարվում են զրադաշտական օրենքի հիմնավոր հավատալիքներն ու հիմքերը, որոնց Դարեհն անդրադառնում է Բիսոթունյան արծանագրության վերջին տողերում:

Ստախոսությունից խուսափելն ու ճշմարտախոսությունը խրախուսելը Դարեհի բարձրագույն հատկանիշներից են և համապատասխանում են զրադաշտական կրոնի քարոզներին, որը ստախոսությունը համարում է դատապարտելի և աստծու դեմ ուղղված արարք, իսկ ճշմարտությունը՝ բնություն և արարում: Պերսեպոլիսում կամ Թախթե Ջամշիդում, Շուշի Նախշե Ռուստանում, Եգիպտոսում, Համեդան քաղաքի Ալվանդ լեռան ստորոտում և այլուր գոյություն ունեցող Դարեհի արծանագրություններում Ահաւամագդան ճանաչվել է որպես միակ և մեծ աստված:

Մեծն Դարեհին հաջորդած Քսերքսեսի՝ Պերսեպոլիսի, Շուշիի և ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Վանի արծանագրություններում նույնպես Ահարումագդան համարվել է միակ և մեծ աստվածը, սակայն իր արծանագրություններից մեկում Քսերքսեսը հիշատակում է մի նոր աստծու՝ Թրուքին: ճիշտ է, Ահարումագդան համարվել է ամենամեծ աստվածը, սակայն այս շեղումը և մեջբերումը կատարվել է Զրադաշտին նախորդած արիական աստվածներից, որոնց Զրադաշտը դուրս մղեց: Այստեղ նրանք հիշատակվում են որպես հրեշտակ, որոնք մի փոքր ցածր են կանգնած Ահաւամագդայից: Այս արծանագրության 7-րդ կետում ասվում է. «Դու, որ ապագայում լինելու ես, եթե

ցանկանում ես կյանքում ուրախ լինել, իսկ մահվան ժամանակ՝ բախտավոր, ապա հետևիր այն հրամաններին, որ տվել է Ահարումազդան, և պաշտիր Ահարումազդային և Արթին»:<sup>16</sup>

Արտաշիր Ա-ի և Դարեհ Բ-ի օրոք Պերսեպոլիսում, Արտաշիր Բ-ի օրոք Յամեդանում, Շուշիում, Արտաշիր Գ-ի օրոք Պերսեպոլիսում, գրված արձանագրություններում մշտապես հիշատակվել է Ահարումազդայի անունը՝ որպես գլխավոր և միակ աստված:

Արտաշիր Գ-ի /Բ.ա.358-338թթ/ ժամանակներից Պերսեպոլիսում պահպանված արձանագրության 4-րդ կետում գրված է.«Արտաշիր արքան այսպես է ասում. «Թող Ահարումազդան և Միտրան պահապան լինեն ինձ և այս երկրին և այն ամենին, ինչ իմ միջոցով պիտի կատարվի» »:<sup>17</sup>

Միտրան արիական աստվածներից է, որին իր արյունալի զոհաբերությունների, ավերիչ ծխականությունների համար ատում է Ջրադաշտը՝ ոչ մի անգամ չհիշատակելով նրա անունը իր <<Գաթիա>>-ներում: Նրանց դեմ պայքարելու լավագույն ծելը նա համարում է նրանց չհավատալը, ուստի իր գրքում նա երբեք չի հիշատակում նրանց անունը: Սակայն շուրջ 12 դար հետո այդ նույն Միտրան նոր կյանք է ստանում Արտաշիր Գ-ի արձանագրության մեջ:

#### **Ahuramazda, Zoroaster and Achaemenid manuscripts**

The study is about the origins of the word "Ahuramazda" and its relationship with the beliefs of Zoroastrian and Achaemenid manuscripts, which have been reached us from the eras of the Achaemenid King Dare III , the Great / 522-484 B.C./

A typical feature of the stone manuscripts of the Achaemenid time is that they start with the name of Ahuramazda evidencing the fact that Iranian people believed in God from the ancient times and not by the start of Islam. The most notable of these manuscripts is the manuscript of Dare the great, which is written on the Bistoon Mountain situated in Kermanshah.

In the holly book of the Zoroastrian beliefs: the Avesta, the name of Ahuramazda has been mentioned, which means great wisdom. And Zarathustra had accepted Ahuramazda as the possessor of all kinds of forces and abilities. Zoroastrianism believes in the rewards of good and bad acts, which will be compensated by Ahuramazda. These are considered the cornerstone of Zoroastrianism, which were reflected in the manuscripts of Dare on the Bistoon Mountain.

<sup>16</sup> Շարալ Դոլֆնարմեն, «Աքեմենյան թագավորների հրամաններ», 3-րդ տպագրություն, Փազինե մշակութային հրատարակչություն, 2009, էջ 121

<sup>17</sup> Շարալ Դոլֆնարմեն, «Աքեմենյան թագավորների հրամաններ», 3-րդ տպագրություն, Փազինե մշակութային հրատարակչություն, 2009, էջ 141